ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԻ ՍԱՐԳՍԻ

ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՕՐՈՐՆԵՐ

ԺԷ.00.02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

АКОПЯН АНИ САРКИСОВНА

АРМЯНСКИЕ ТРАДИЦИОННЫЕ КОЛЫБЕЛЬНЫЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.02 – “Музыкальное искусство”

ЕРЕВАН – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ Ալինա Աշոտի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Աննա Սենի
արվեստագիտության թեկնածու
ԱՄԻՐԱՂՅԱՆ Գայանե Աշոտի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023թ. փետրվարի 9-ին, ժամը՝ 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. դեկտեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա.Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – доктор искусствоведения, профессор
ПАХЛЕВАНЯН Алина Ашотовна

Официальные оппоненты – доктор искусствоведения, профессор
АРЕВШАТЯН Анна Сеновна
кандидат искусствоведения
АМИРАГЯН Гаяне Ашотона

Ведущая организация – Армянский государственный педагогический университет имени Х.Абовяна

Защита диссертации состоится 9-го февраля 2023г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 21-го декабря 2022г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А.Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թեև XIX դարի երկրորդ կեսից սկսած օրորի ժանրի նմուշներ գրառեցին նախ բանահավաքները՝ իբրև բանահյուսական նյութ, ապա նաև երաժշտագետները՝ իբրև երգային օրինակներ, սակայն մինչ այժմ օրորը որպես երաժշտա-բանաստեղծական համալիր երևույթ մեզանում համակողմանիորեն վերլուծված չէ:

Օրորների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների բերած նորություններն ու ձեռքբերումները ամբողջացնելով կներկայացնենք ժանրի բնութագիրը, ենթատեսակները, երաժշտական առանձնահատկությունները՝ կառուցվածքը, ձայնակարգը, ռիթմը, խոսք-մեղեդի կապը:

Օրորի ժանրը վաղ գրառումներից մինչ օրս, մեր իսկ դաշտային աշխատանքով հիմնավորված, համարվում է կենսունակ, հետևաբար նաև ժամանակի ազդեցությունը կրող: Այդ ամենը, այս փուլում, հնարավորինս փորձել ենք ներկայացնել երաժշտական հավելվածում ներկայացված տարբեր ժամանակներում ու տարբեր տարածաշրջաններից գրառված 124 երաժշտական նմուշով, որի վերլուծությունն էլ կազմում է աշխատանքի հիմքը: Օրորի ժամանակակից կենցաղավարման խնդիրները մի առանձին հետազոտության թեմա է, որին հպանցիկ ենք անդրադարձել՝ մեր նպատակն էր ճշտել ժանրի կենսականությունը:

Ստացվում է, որ թեմայի ընտրությունը որքան հետաքրքրությամբ, այնքան էլ անհրաժեշտությամբ էր պայմանավորված՝ թեմայի շրջանակում սա երաժշտագիտական համակողմանի ուսումնասիրության առաջին քայլն է, որն անկասկած պիտի ունենա շարունակություն:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հայ իրականության մեջ օրորի ժանրը, որ լայն առումով համարվում է քնարական ժանրի մի ինքնուրույն ու երևելի մաս, նպատակային հետազոտման փուլ թևակոխելուց առաջ, ինչպես բանահյուսության ցանկացած ժանր նախ պետք է մեկիկ-մեկիկ գրառվեր, դրանց հիման վրա կատարվեին որոշակի դիտարկումներ ու վերլուծություններ: Այդ ժամանակատար գործընթացի մեկնարկը տրվեց XIX դարի 60-ականներին և լայն թափ ստացավ հատկապես XX դարի սկզբին լույս տեսած ժողովածուներում (գրառող-կազմողներ. Միք. Միանսարյանց, Ա. Տեր-Սարգսենց, Գ. Շերենց, Ալ. Մխիթարյանց, Գ. Հովսեփյան, Վ. Տեր-Մինասյան, Հ. Ճանիկեան, Տ. Վարդանյանց): Այս ամենին զուգահեռ կարևոր ձեռքբերում էր «Ազգագրական հանդեսի» ու «Էմինեան ազգագրական ժողովածուի»

գործունեությունը: Վերջինի Զ հատորի էջերում էլ առաջին անգամ իբրև թեմատիկ ինքնուրույն բաժին ներկայացավ օրորոցի երգը[1]: Ժանրի վերաբերյալ դիտարկումներ ունեն ազգագրագետներ, լեզվաբաններ Սարգիս Հայկունին[2], Մանուկ Աբեղյանը[3], Դավիթ Գասպարյանը[4], Սարգիս Հարությունյանը[5]:

Թեմայի նպատակային ուսումնասիրության կարևոր քայլը կատարեց մանկական բանահյուսության խոշոր գիտակ Ռոզա Գրիգորյանը: Նա առաջին անգամ իրականացրեց վերը հիշատակված ազգագրագետների, ազգագրական հավաքածուների, պարբերական մամուլի էջերում տեղ գտած, ինչպես նաև իր կողմից տասնամյակների ընթացքում հավաքած հսկայածավալ նյութի դասակարգումն ու խմբավորումն ըստ ենթախմբերի, կատարեց այդ նյութի համակողմանի բանագիտական վերլուծություն[6]:

Հաջորդ փուլում տարիներ շարունակ առտնին աշխատանքային երգերի, այդ թվում օրորի ժանրի, հավաքման նպատակային գիտարշավներ իրականացրեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հռիփսիմե Պիկիչյանը, ով վերլուծելով նորագույն դաշտային գրառումները և արդեն իսկ հրատարակված նմուշները, առաջարկեց դասակարգման իր հայեցակետը[7]:

Թեմայի շուրջ վերջին հետազոտությունն իրականացրել է բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Մատիկյանը, ով իր

---

[1] Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Զ. ժողովրդական երգ, առած, ասած հանելուկ, երդում օրհնանք, անէծք, եւ այլն, հաւաքեց՝ **Հայկունի Ս.**, Օրորոցի երգեր, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 64-72:

[2] Նշվ. ժողովածու, էջ 64 տողատակի ծանոթագրություն:

[3] **Աբեղյան Մ.,** Երկեր, հատոր Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, էջ 239-241: Ինչպես նաև հպանցիկ, բայց շատ կարևոր դիտարկումներ կան ոչ միայն նշված աշխատության էջերում, այլ նաև հեղինակի երկերի մյուս հատորներում:

[4] **Գասպարյան Դ.,** Հայոց բանահյուսություն, Հայոց լեզու և գրականություն հանդես, 2013, 4 (91), էջ 3-25:

[5] **Հարությունյան Ս.,** Բանագիտական ակնարկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 102-103:

[6] **Գրիգորյան Ռ.,** Հայ ժողավրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 12-95:

[7] **Պիկիչյան Հ.**, Երաժշտությունը հայոց ավանդական առտնին և տոնածիսական կյանքում, Երևան, «Ամրոց գրուպ», 2012, էջ 20-27:

աշխատանքի հիմքում հայ և անգլալեզու օրորների համեմատական-զուգադրական մեթոդն է կիրառել[8]:

Այլ է պատկերը երաժշտագիտական դաշտում. բանն այն է, որ մինչ օրս ժանրի վերաբերյալ որևէ գիտական խոր հետազոտություն մեզանում չի կատարվել, բացառությամբ չափազանց հետաքրքրական, սակայն եզրահանգումներ չպարունակող հոդվածների, դիտարկումների: Այսպես, ըստ Ռոբերտ Աթայանի ժանրային դասակարգման հարցում հետաքրքիր մոտեցում ունի Կոմիտասը[9]: Արժեքավոր դիտարկումներ կան Մանուկ Մանուկյանի[10], Մուշեղ Աղայանի[11] և Հասմիկ Ափինյանի[12] թեմատիկ հոդվածներում, իսկ ահա երաժշտագիտական դաշտում ժանրի ինքնուրույնացման կարևոր քայլն իրականացրել է Մարգարիտ Բրուտյանը[13]:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը հայ ավանդական երաժշտության հատկապես գեղջկական ճյուղը ներկայացնող օրորների հետազոտությունն է, բացառությամբ Ակնի միջնադարյան քաղաքային արվեստը ներկայացնող նմուշների[14]:

Նպատակն իրականացնելու ճանապարհին ամենաէական խնդիրն այն էր, որ, փաստորեն, երաժշտագիտական խոր հետազոտությունների բացակայությամբ, ինչպես նաև ժանրի կենսականությամբ պայմանավորված

---

[8] **Մատիկյան Հ.**, Անգլալեզու օրորոցային տեքստի լեզվա-բանագիտական քննություն (հայ բանահյուսական նյութի զուգադրությամբ), ատենախոսություն, Երևան, 2019, II գլուխ:

[9] Կոմիտաս Երկերի Ժողովածու (այսուհետ ԿԵԺ), X հատոր, նախաբան:

[10] **Մանուկյան Մ.**, Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, Երևան. 1997 ժողովածուի ժանրային խմբավորման մեջ երաժշտագետը օրորոցային երգերը դիտարկում է իբրև աշխատանքային երգերի մաս:

[11] **Աղայան Մ.,** Մի ակնարկ ժողովրդական օրորների մասին («Նանա»-ներ), Տեղեկագիր հայկական ՍՍՌ գիտությունների Ակադեմիայի, Երևան, 1948, N8, էջ 39-51:

[12] **Ափինյան Հ.,** Օրորոցային երգի ժանրը Շիրակի ժողովրդական երգարվեստում, Գիտական աշխատություններ, III հատոր, էջ 165-175:

[13] **Բրուտյան Մ.**, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, «Ամրոց գրուպ», 2004, էջ 194-202:

[14] Մի շարք երաժշտագետներ, այդ թվում հայ մոնոդիկ երաժշտության խոշոր գիտակ-տեսաբան Ք. Քուշնարյանը, այս տարածաշրջանի հետ են կապում միջնադարյան անտունիների, հայրենների ավանդույթը, ինչպես նաև գուսանական, տաղային արվեստի ծաղկումը, որը պարարտ հող է ստեղծել և ինքնատիպ կնիք թողել հայ ժողովրդի գեղջկական երգամտածողության մեջ կենցաղավարող օրորի ժանրի վրա:

նյութը չափազանց ընդգրկուն էր: Դա մի տեսակ «անորսալի» էր դարձնում հետազոտության սպառիչ լինելու ցանկությունը, ուստի որոշում կայացրեցինք այս փուլում ինքներս մեզ «սահմանափակել» ուսումնասիրվող նյութի մի գլխում՝ երաժշտական բանահավաքչության վաղ փուլի, իսկ մյուսում՝ ազգագրական գոտիների շրջանակով:

Այսպիսով, ընտրեցինք հայ ավանդական երաժշտական մշակույթի «ոսկե դարը» համարվող XIX դարավերջին ու XX դարասկզբին գործունեություն ծավալած բանահավաքների գրառումները, երբ ժամանակն անհամեմատ նպաստավոր էր այդ մշակույթի կենցաղավարման, հետևաբար նաև նյութի հավաստիության առումով: Իսկ ահա ազգագրական գոտիները ներկայացնող նյութն ընդգրկում է չորս շրջան: Ընտրությունը երկուսի դեպքում, այն է Վայոց Ձոր և Ջավախք, պայմանավորված է ՀՀ ԳԱԱ Արվեստի Ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարան-արխիվում տարիներ շարունակ ամբարված նյութի երևելի քանակով, համապատասխանաբար 35 և 23 նմուշ, իսկ պատմական Վան-Վասպուրական և Տարոն աշխարհներին վերագրվող հատուկենտ, սակայն վառ ավանդականությամբ աչքի ընկնող ցաքուցրիվ նմուշների համակարգումն ու վերլուծությունը նպատակ ուներ, թեկուզ մեկ ժանրի շրջանակում, ընդգծել, դուրս բերել այդ հետաքրքրական ազգագրական գոտիների յուրահատուկ երաժշտամտածողությունը:

Այս փուլում նման ընտրությունն ու ընթացքը թույլ տվեց մեզ մի դեպքում հիմնվելով ֆոլկլորի համար բարենպաստ պայմաններում գրառված ամենատիպական նմուշների և մյուսում՝ կոնկրետ ազգային գոտիներ ներկայացնող նյութի վրա դուրս բերել զուտ ժանրային-ենթատեսակային, միջժանրային, ինչպես նաև համազգային ու լոկալ-տարածաշրջանային օրինաչափություններ:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ կատարվել է ժանրի երաժշտագիտական բնութագրումն ու դրանում ենթատեսակների գոյության փաստի երաժշտագիտական հիմնավորումը, ձայնակարգային, կառուցվածքային, թեմատիկ յուրահատկությունների, ինչպես և համազգային ու տեղային ինքնատիպ դրսևորումների դուրսբերումը:

Գիտական նորույթի առանցքային կետերը հետևյալն են.

ա. ինչպես հրատարակված, այնպես էլ մեծ թվով արխիվային անտիպ նյութերի ուսումնասիրության արդյունքում գիտական շրջանառության ենք դրել մի շարք նորահայտ կամ նոր գրառված օրորներ,

բ. երաժշտագիտական տեսանկյունից բնութագրել ենք օրորի ժանրը, կատարել ենթատեսակավորում, ինչպես և վերլուծությամբ՝ ձայնակարգ, կառուցվածք, մեղեդու և տեքստի բանաձևեր, որոնք կարող են լինել ընդհանրական և տեղային, մեղեդի-տեքստ հարաբերակցություն, ուսումնասիրված 124 նմուշի հիմքով դուրս ենք բերել օրինաչափություններ,

գ. ենթատեսակներում ընդգծել ենք ժանրի համար ընդհանրականը և ենթաժանրի համար բնորոշը,

դ. թերևս առաջին անգամ, մեկ ժանրի շրջանակում, փորձել ենք դուրս բերել չորս ազգագրական գոտու երաժշտական բարբառի առանձնահատկություններ:

Աշխատանքի գործնական նշանակությունը:

ա. աշխատության հիմնաքարը հանդիսացող երաժշտական նյութի հիման վրա կազմել և հրատարակել համահավաք ժողովածու, որը թույլ կտա գիտական շրջանառության մեջ դնել նաև օրորների նոր կամ նորահայտ նմուշներ,

բ. ուսումնասիրության հիմքը կազմած նոր կամ նորահայտ նմուշների համերգային կյանք,

գ. կոնկրետ ջանքերի, գործիքակազմի շնորհիվ (դասախոսություններ, աշխատանոցներ, սոցիալական հարթակի լայն հնարավորություններ, հետագայում՝ տարբեր ժողովուրդների ավանդական օրորներին նվիրված միջազգային գիտաժողով-փառատոն) ժամանակակից հայ մայրիկի գիտակցության մեջ կարևորել օրորն իբրև երեխայի առողջ հոգեկան և ֆիզիկական զարգացումը խթանող ազգապահպան երևույթ:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Հաշվի առնելով ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակը, խնդիրները, հիմնականում կիրառվել է նյութի երաժշտա-տեսական վերլուծական մեթոդը՝ պատմա-ազգագրական կոնտեքստում: Հաշվի է առնվել նյութի գրառման ժամանակաշրջանն ու դրա հետազոտության ուղին՝ ոչ միայն երաժշտագետների, այլ նաև ազգագրագետ-բանահավաքների, պատմաբանների շրջանակում:

Ատենախոսության փորձաքննությունը: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի նիստում: Աշխատանքի հիմնական դրույթները տպագրվել են Հայաստանում հրատարակվող

գիտական պարբերականներում («Արվեստագիտական հանդես», ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «ՎԷՄ», ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», «Պատմություն և քաղաքականություն», Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու»), զեկուցվել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ներկայացվել դասախոսություններում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (Առաջին գլուխ՝ «Հայկական ժողովրդական երգաստեղծության օրորի ժանրը», Երկրորդ գլուխ՝ «Օրորը XIX դարավերջի և XX դարասկզբի գրառումներում», Երրորդ գլուխ՝ «Օրորը չորս ազգագրական գոտիներում»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և 124 երաժշտական նմուշ պարունակող երաժշտական հավելվածից, որը նախատեսվում է համալրել և հրատարակել իբրև օրորի ժանրի համահավաք ժողովածու:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի ուսումնասիրման արդիականությունն ու անհրաժեշտությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, մեր հետազոտական նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, հետազոտության գիտական և գործնական նշանակությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՕՐՈՐԻ ԺԱՆՐԸ

Ատենախոսության առաջին գլուխը ներառում է *օրոր* երաժշտա-բանաստեղծական երևույթի բնութագիրը, հայ ֆոլկլորագիտության մեջ ժանրի ինքնուրույնացման պատմական ընթացքը, դրա հետևանք հանդիսացող ենթատեսակավորման անհրաժեշտությունը, երգերում շրջանառվող հիմնական թեմատիկան, բնույթն ու կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև մեր օրերում ժանրի կենսականությանը նվիրված հետազոտական փորձ ներկայացնող երեք ենթագլուխ:

1.1. Ժանրի բնութագիրը:

Օրորն իբրև երեխային քնեցնելու գործընթացն ուղեկցող երաժշտա-բանաստեղծական ստեղծագործություն ներկայացվում է նաև որպես հոգեբանական ազդեցությամբ և ճանաչողական կարևոր գործառույթով,

ինչպես նաև ազգապահպան նշանակությամբ կարևոր երևույթ: Մարդկության գոյության անհիշելի ժամանակներից սկսյալ օրորոցային երգը եղել է նոր աշխարհ եկած մարդու արտաքին աշխարհի հետ շփման առաջին օղակներից մեկը: Օրոր երգում են այնտեղ ուր կա մարդ, ծնունդ, կյանք՝ անկախ ազգությունից: Արդյունքում, ժանրը ձեռք է բերել համամարդկային ընդանուր գծեր: Մյուս կողմից՝ լինելով հնագույն շերտերից փոխանցված երևույթ այն խտացրել է յուրաքանչյուր ազգի երաժշտական մտածողության առանձնահատկությունները: Արդյունքում, կրելով հնագույն շերտերից եկող ավանդականությունը, այս երգերը առավելագույնս արտացոլում են ժողովրդի կյանքն ու կենցաղը, բարքերն ու սովորույթները, նիստուկացը. այսինքն՝ տեսակը:

1.2. Օրորը ֆոլկլորագիտական ուսումնասիրություններում, ենթաժանրերն ու թեմատիկան:

Օրորի ժանրն իբրև գեղջկական երգաստեղծության թեմատիկ, բովանդակային մի ինքնուրույն տարր ձևավորվել է ժամանակի ընթացքում՝ նախ նյութի հավաքչություն, ապա՝ հետազոտություններ: Այդ ուղին ներկայացվում է Կոմիտասից մինչ մեր օրեր և առաջ քաշվում ժանրի ներսում ընդհանրություններով հանդերձ ակնհայտ տարբերություններով աչքի ընկնող ենթատեսակների առանձնացման անհրաժեշտությունը: Ժանրի ուսումնասիրության, դրանում ենթատեսակավորման /ենթաժանր/ հստակ ձևակերպումներ առկա են բանագիտության մեջ, սակայն երաժշտագիտական ուսումնասիրություններում հստակ ձևակերպումներն ու վերլուծությամբ հիմնավորված դիտարկումները ցայսօր բացակայում են: Ամփոփելով արվածը, ներկայացնում ենք սեփական հայեցակետ ժանրում առանձնացնելով *զուտ օրորելու գործառույթ ունեցող հանպատրաստից հորինվածքներ* և նույն գործառույթի հետ կապված, սակայն *ժամանակի ընթացքում կայունացած, ավանդաբար փոխանցվող օրորներ*: Ներկայացվում է նաև երգերում շրջանառվող հիմնական թեմատիկան՝ լայն շրջանակով հանդերձ գերակշռող է, իհարկե, երեխային ուղղված գովք-օրորը:

1.3. Օրորի կենցաղավարումը ժամանակակից ընտանիքում:

Օգտվելով համացանցի ընձեռած լայն հնարավորությունից մի քանի հարյուր մայրիկների շրջանակում իրականացրեցինք հեզոտական հարցում-երկխոսություն պարզելու համար որքանով կենսունակ է այսօր մեզ հետաքրքրող ժանրը: Մասնագիտական նեղ շրջանակից դուրս, սակայն չափազանց կարևոր այս ոչ ծավալուն հետազոտական աշխատանքը ցույց

տվեց, որ չնայած համաշխարհայնացման արագ տեմպերին և ավանդական մշակույթին դրա հասցրած վնասներին, ժանրի հանդեպ բավական մեծ հետաքրքրությունը ակնհայտ է: Ստացվեց, որ ժանրը, ինչ-ինչ խոցելի կողմերով հանդերձ, միևնույն է կենսունակ է:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՕՐՈՐԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլխում, որ իրենից ներկայացնում է բուն վերլուծվող նյութ, ընտրվել է հայ երաժշտական բանահյուսության գրառման կոնկրետ ժամանակաշրջան: Ինչպես հայ ժողովրդական բանավոր մշակույթի մյուս ճյուղերն ու ժանրերը, օրորները ևս գրառվեցին բավական ուշ: Սա հատկապես վերաբերում է երաժշտական նյութի գրառմանը, որ ավելի բարդ ու նեղ մասնագիտական հմտություններ պահանջող աշխատանք էր: Ստացվում է, որ օրորն ամբողջականորեն, իբրև երաժշտա-բանաստեղծական ստեղծագործություն գրառվեց միայն XIX դարի վերջից սկսած:

Մեր ուշադրության ծիրում են Կոմիտասի, Հ. Հարությունյանի, Սպ. Մելիքյանի, Մ. Թումաճանի, Ք. Քուշնարյանի կողմից պատրաստած, որոշ դեպքերում այլոց կողմից խմբագրված ու հրատարակված ժողովածուներում տեղ գտած օրորները, որոնք ներկայացնում են ժողովրդական երաժշտության գրառման «ոսկե դարը», երբ հատկապես գեղջուկն ապրում էր իրեն փոխանցված նիստուկացով ու կենցաղով՝ իր առօրյա կյանքում հաց ու ջրի նման տեղ հատկացնելով երգին: Նշված ժամանակաշրջանում գործունեություն ծավալած նվիրյալ երաժշտագետ բանահավաքների շրջանակը իհարկե ավելին է, սակայն այս դեպքում առանձնացրել ենք օրորի ժանրի գրառումներ պարունակող հավաքածուները:

2.1. Օրորը Կոմիտասի ազգագրական ժողովածուներում:

Հայ ազգային կոմպոզիտորական ու երաժշտագիտական դպրոցի հիմնադիր, կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ, բանաստեղծ **Կոմիտասի** ազգագրական ժառանգությունը ներկայացված է ակադեմիական հրատարակության IX-XIV հատորներում, որտեղ կա օրորի ժանրի 12 նմուշ, որոնցից 4-ը՝ ավանդաբար փոխանցված, ժանրի կայունացած երգեր են, իսկ 8-ը՝ տեղում, հանպատրաստից հորինված կամ հայտնի որևէ մեղեդու վերակերտումներ: Երգերում միանշանակ է ձայնակարգային պատկերը՝ 12-ից 11-ը էոլական մինորի այս կամ այն տեսակում, իսկ 1-ը՝ լոկրիական մինորում է:

2.2. Օրորը Սպիրիդոն Մելիքյանի գրառումներում:

Կոմիտասի սան, բանագետ, բանահավաք, մանկավարժ, խմբավար, տեսաբան ու երաժշտական հասարակական գործիչ **Սպիրիդոն Մելիքյանը** հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների, դասախոսությունների ու զեկուցումների:

Նրա կենդանության օրոք լույս տեսան նրա գրառած Շիրակի[15], Վանա[16] երգերի ժողովածուները, իսկ 1926-27թթ. Հայաստանի տարբեր շրջաններից գրառված՝ 533 նմուշ պարունակող հավաքածուի հիման վրա էլ երկհատորյակ կազմվեց և հրատարակվեց հետմահու[17]: «Շիրակի երգեր» ժողովածուում հրատարակվել է իրականում երկու, սակայն ըստ բանահավաքի չորս, իսկ երկհատորյակում՝ վեց օրորերգ:

Արդյունքում, Սպ. Մելիքյանը գրառել և մեզ է փոխանցել է 8 օրոր, որոնցից 2-ը կայունացած օրորոցի երգեր են, 6-ը՝ հանպատրաստից, տեղում հորինված օրորելու երգեր: Ձայնակարգային պատկերը հետևյալն է. էոլական՝ 5, փռյուգիական՝ 2, իոնական՝ 1:

2.3. Օրորը Հակոբ Հարությունյանի ժողովածուում:

XX դարի սկզբներին գրառված, հետմահու հրատարակված **Հ. Հարությունյանի** «Մանյակ» ժողովածուում դիտարկվող ժանրի միայն մեկ, բայց անչափ հետաքրքրական «Օրորոցի երգ» վերտառությամբ նմուշը կայունացած օրորի փայլուն դրսևորումներից է: Վանի տարածաշրջանը ներկայացնող այս բացառիկ երգի ծանոթագրության բաժնում, ցավոք, բացակայում են մեզ համար չափազանց կարևոր տեղեկությունները ինֆորմանտի մասին, սակայն իր երաժշտական բարբառային ցուցիչներով երգը կրում է տարածաշրջանին բնորոշ երաժշտական մտածողության կնիքը:

---

[15]Ժողովրդական երգեր. Ազգագրական ժողովածու, հ. I, Շիրակի երգեր: Հավաքեցին ֆոնոգրաֆով Սպ. Մելիքյան և Ան. Տեր-Ղևոնդյան: Ձայնագրեց Սպիրիդոն Մելիքյան, Թիֆլիս 1917, 152 երգ, պարերգ և խաղ:

[16]Վանա ժողովրդական երգեր, Ազգագրական ժողովածու: Հավելված ՀՍՍՌ Գիտության և Արվեստի Ինստիտուտի N1 Տեղեկագրի: Ձայնագրեցին Սպիրիդոն Մելիքյան և Գարեգին Գարդաշյան: Երևան, 1927թ., Ձեռ. 100 երգ, պարերգ և պարեղանակ:

[17] Հայ ժողովրդական երգեր և պարեր, Սպ. Մելիքյան, խմբ.՝ Մ. Աղայանի, հ. I, Երևան, Հայպետհրատ, 1949: Հայ ժողովրդական երգեր և պարեր, Սպ. Մելիքյան, խմբ.՝ Մ. Աղայանի, հ. II, Երևան, Հայպետհրատ, 1952:

2.4. Օրորը Միհրան Թումաճանի քառահատորյակում:

Կոմիտասի արժանի սան **Միհրան Թումաճանի** «Հայրենի երգ ու բան» հավաքածուի քառահատորյակում հրատարակված է 12 օրորերգ, որոնք ներկայացնում են Բութանիան, Կեսարիան, Ակնը, Տիգրանակերտն ու Խլաթը, որոնցում ևս գերակայող են ժանրի կայունացած օրորի ենթատեսակը, ինչպես նաև միանշանակ է ձայնակարգային պատկերը՝ 12 նմուշից. 10-ը՝ էոլական, 1՝ դորիական, 1՝ փռյուգիական մինորներ:

2.5. Տպագրված և անտիպ օրորները Քրիստափոր Քուշնարյանի գրառումներում:

Երաժշտագետ, տեսաբան **Քրիստափոր Քուշնարյանը** 1927 թվականից սկսած դեռևս իբրև Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի աշխատակից պարբերաբար եկել է Հայաստան և գրառել ժանրի 12 նմուշ, որոնցից միայն 6-ը տպագրվել էին նրա ժառանգությունն ընդգրկող ժողովածուում[18], մյուսները մեր փնտրտուքի արդյունքում հայտնաբերեցինք Արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարան-արխիվից՝ վերծանության և հետազոտության ենթակա էին 4 նմուշ: Փաստորեն, այս գլխում քուշնարյանական գրառումները միակն են, որ մեզ են հասել ձայնագրյալ արխիվով և այս հետազոտության շնորհիվ շուրջ 100-ամյա հնության օրորի նորահայտ նմուշները կդրվեն գիտական, հուսով ենք, նաև համերգային շրջանառության մեջ:

Այսպիսով, հայ երաժշտական բանահավաքչության վաղ շրջանի, այն է XIX դարավերջի և XX դարասկզբի մի շարք երախտավորներից միայն 5-ի հավաքածուում գտանք մեզ հետաքրքրող ժանրի գրառումներ:

Նրանք տարբեր շրջաններից ու բանասացներից գրառել են **43** օրոր, որոնցից 26-ը ավանդաբար փոխանցված, կայունացած օրորներ, 18-ը՝ հանպատրաստից հորինված օրորելու երգեր:

Հաշվի առնելով ժանրի շատ անձնական բնույթը, ինչի հետևանքով խիստ դժվարանում է նյութի հավաքագրումը իր տեղին, իր ժամանակին, նշված ժամանակաընթացքում գրառված երգերի քանակը չնայած այնքան էլ մեծ չէ, սակայն բավարար, ու այնուամենայնիվ թույլ է տալիս ուսումնասիրական եզրահանգումներ կատարել, որոնք հիմնված են բանահավաքչության այս կարևոր փուլի ընթացքում ֆիքսված նյութի վրա: Մի

[18] Հայ ավանդական երաժշտություն, III պրակ, Երևան, 2008:

փուլ, երբ ավանդական ապրելակերպի պայմաններում դեռ վառ էր պահպանված հայ ժողովրդի մշակութաստեղծ «ծոցում» հազարամյակներ առաջ ստեղծված, դարերի «փոշին» իր վրա հպարտորեն կրող բանավոր մշակույթը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՕՐՈՐԸ ՉՈՐՍ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երրորդ գլուխը ներկայացնում է հայ ֆոլկլորագիտության չափազանց հետաքրքրական, սակայն քիչ հետազոտված մի առանձին բնագավառի՝ ազգագրական գոտիների երաժշտական բարբառի խնդիրը՝ մեզ հետաքրքրող ժանրի դիտանկյունից: Այս փուլում ընտրվեց չորս ազգագրական գոտի, որոնցից երկուսի ընտրությունը, այն է՝ Վայոց Ձոր և Ջավախք, կապված է նոր շրջանում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատողների կողմից արված տասնյակ ձայնագրությունների քանակով, իսկ երկուսի դեպքում ընտրել ենք պատմական Հայաստանի ամենաերգեցիկ երկու տարածաշրջանները՝ Վան-Վասպուրական և Տարոն:

Այս չորս ազգագրական գոտիների օրորներում բարբառային դրսևորումների դուրսբերումը թույլ տվեց ստանալ որոշակի պատկեր՝ դուրս բերել ժանրի համար ընդհանրական, տիպականը և մյուս կողմից՝ «տեսնել» տվյալ ազգագրական գոտու «կնիքը» ժանրի վրա:

3.1. Վան-Վասպուրական/Շատախ

Ենթագլխում քննարկվող Շատախ աշխարհից մեզ հասած ինը նմուշից երեքը առաջին անգամ են հրապարակվում: Հայրիկ Մուրադյանի բացառիկ կատարմամբ օրորներ, որոնք այս ենթագլխի հիմնաքարն են, հրատարակվել էին Ա. Փահլևանյանի կազմած ժողովածուում[19] և Արվեստի ինստիտուտի թողարկած «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի VII պրակում[20], սակայն հետազոտության ընթացքում Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում հայտնաբերեցինք նրա կատարմամբ ևս մեկ օրորի բացառիկ ձայնագրություն: Ինչպես նաև՝ առաջին անգամ են հրապարակվում Մարթա Փիրումյանից բանավոր կերպով, Արուսյակ Սահակյանի միջնորդությամբ, մեզ փոխանցված հայրուր, և վերջինիս, կրողի կատարմամբ, ձայնագրության փնտրտուքի ընթացքում ԵՊԿ ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանից, Հասմիկ

---

[19] **Փահլևանյան Ա.,** Հայրենի երգեր, Երևան, 2007:

[20] «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշար, պրակ VII, 2012:

Էլոյանի օժանդակությամբ, հայտնաբերված տարածաշրջանի ևս մեկ բացառիկ օրոր՝ Սեդա Ստամբոլցյանի կատարմամբ:

Շուրջ մեկ տասնյակի հասնող նմուշների հետազոտությունը թույլ տվեց կատարել եզրակացություններ և դուրս բերել ազգագրական գոտուն բնորոշ հատկանիշներ:

3.2. Տարոն/Սասուն

Ենթագլխում քննության ենք առել Տարոն աշխարհից մեզ հասած 10 նմուշ, որոնք մեկտեղել ենք տարբեր ժողովածուներից, ազգագրական հանդեսներից: Միևնույն ժանրի նմուշների այս քանակը, նախորդ ենթագլխի օրինակով, ևս թույլ տվեց ստանալ չափազանց հետաքրքրական, տիպական մտածողությամբ և ավանդականի վառ դրսևորմամբ այս ազգագրական գոտու ընդհանուր նկարագիր և կատարել եզրակացություններ: Դրանք վկայում են այն փաստը, որ անկախ ժանրային պատկանելությունից գոյություն ունեն զուտ տարածաշրջանային առանձնահատկություններ, որոնք այս կամ այն չափով արտացոլվում են որևէ ժանրի նմուշում:

3.3. Վայոց Ձոր

Ենթագլուխը նվիրված է Վայոց Ձորից XX դարի երկրորդ կեսին ձայնագրված 35 օրորի հետազոտությանը, որոնք մեծավ մասամբ դիպվածային հանպատրաստից հորինված հանկարծաբանական օրորելու երգեր են: Հաշվի առնենք, որ նյութը գրառվել է նպատակային գիտարշավի ընթացքում. բանահավաքներ Զավեն Թագակչյանը և Հռիփսիմե Պիկիչյանը հետազոտական նպատակով փնտրում էին հատկապես առտնին աշխատանքային երգեր: Բանահավաքների շնորհիվ արդեն իսկ հրատարակվել է տարածաշրջանը ներկայացնող 34 օրորոցային, որն էլ նպատակային գիտարշավի ընթացքում համալրել ենք ևս մեկ հետաքրքրական նմուշով: Անկախ ենթատեսակից՝ նմուշների նման պատկառելի քանակը թույլ է տալիս առանձնացնել տարածաշրջանային առանձնահատկություններ:

3.4. Ջավախք

Ենթագլուխը նվիրված է Ջավախքից XX դարի երկրորդ կեսին ձայնագրված 23 օրորի հետազոտությանը: Ողջ ենթագլխի հիմքը կազմող նյութը անտիպ, արխիվային նմուշներ են, ինչով պայմանավորված նյութը ներկայացվում է այլ սկզբունքով՝ ձայնագրության տուփ, անձնագրային տվյալներ, որից հետո երաժշտական-բանաստեղծական հիմնական առանձնահատկությունների դուրսբերում: Նմուշներից 22-ը տարիներ

շարունակ հավաքել, վերծանել և սիրահոժար մեզ է տրամադրել սիրելի ավագ գործընկեր, ոլորտի նվիրյալ Զավեն Թագակչյանը, իսկ մեկը համավարակային շրջանում մեր խնդրանքով ձայնագրել և մեզ է տրամադրել ջավախեցի Լուիզա Մոսոյանը՝ նմուշը այդ տարածաշրջանում բանավոր կերպով չափազանց տարածված, իսկ այսօր արդեն վերծանված է: Այս ազգագրական գոտում, անկախ գրառման ժամանակաշրջանից, հանդիպում են ինչպես կայունացած, այնպես էլ՝ հանպատրաստից ստեղծված օրորելու երգեր, ինչպես նաև ակնհայտ է յուրատիպ երաժշտական մտածողության փաստը:

Այսպիսով, կայունացած օրորոցի երգեր գրառվել են ձայնագրիչ սարքերի բացակայության և ավանդական մշակույթի գոյատևման համար թերևս ավելի բարենպաստ պայմաններում հայ մեծանուն բանահավաք-ազգագրագետների կողմից 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին աուդիտիվ կերպով, որոնց անդրադարձանք նախորդ գլխում: Իսկ ահա երրորդ գլխում վերլուծված նյութը հիմնականում փաստարկված է ձայնագրիչ սարքերի առկայության պայմաններում՝ դրանցում մեծ քանակ են կազմում հատկապես հանպատրաստից հորինված օրորելու երգերը: Այս առումով, երրորդ գլխում վերլուծված նյութը առաջին երկու ենթագլուխներում /Վան և Տարոն/ զուգադրելի է միմյանց հետ և դրանցում գերակայող է կայունացած օրորոցի երգի ենթատեսակը, իսկ հաջորդ երկուսում /Վայոց Ձոր և Ջավախք/՝ միմյանց հետ, այս դեպքում ունենք հակառակ պատկեր՝ հիմնականում հանպատրաստից ստեղծված օրորելու երգեր: Հատկապես վառ ավանդականությամբ աչքի ընկնող, հայ ժողովրդի ամենաերգեցիկ գավառների, Վանի և Տարոնի երաժշտամտածողության առանձնահատկությունների զուգադրումը ակնհայտ է դարձնում միևնույն ազգի ներսում առկա տարածաշրջանային երանգավորումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրորոցային երգը, որը ներառում է մեղեդի, խոսք և շարժում՝ պայմանավորված երեխային օրորելով, այս դեպքում մասնագիտական առումով առաջին անգամ դիտարկվել է որպես երաժշտա-բանաստեղծական համալիր երևույթ՝ չանտեսելով իհարկե ազգաբանական ու հոգեբանական կողմը ևս: Ատենախոսության մեջ ուսումնասիրված ավանդական օրորի ժանրի քննությունը, հիմնված 124 նմուշի երաժշտագիտական համակողմանի ուսումնասիրության վրա թույլ տվեց կատարել որոշ եզրակացություններ.

- Հայ ավանդական օրորոցային երգն իրենից ներկայացնում է ազգային երաժշտական մտածողության վառ կնիքն ու ինքնությունը կրող ժանր, որի ակունքները գալիս են անհիշելի ժամանակներից:
- Ժանրի բանագիտական խոր ուսումնասիրությունների, երաժշտագետների որոշ դիտարկումների ինչպես նաև մեր երաժշտա-բանաստեղծական վերլուծությունների հիման վրա առաջարկեցինք ժանրի ներսում առանձնացնել հստակ տարբերակմամբ աչքի ընկնող ենթատեսակներ՝ ժամանակի ընթացքում կայունացած ավանդական օրորոցային երգ և սոսկ օրորելու գործառույթ ունեցող հանպատրաստից ստեղծված օրոր:
- Այս երկուսում մի շարք տարբերակիչ հատկանիշներից էականը և աչքի զարնողը երաժշտական ու բանաստեղծական կառուցների մի դեպքում հստակությունը, մյուսում՝ դրանց տարերայնությունը, ձևակազմության հստակության բացակայությունը:
- Այս համատեքստում նկատելի է այն օրինաչափությունը, որ ժանրի կայունացած ենթատեսակի նմուշները օբյեկտիվ պատճառներով, հնարավորինս անխաթար վիճակում մեզ են հասել երաժշտական նյութի գրառման առավել բարենպաստ ժամանակաշրջանից՝ XIX դարավերջ և XX դարասկիզբ:
- Օրորներում, անկախ ենթատեսակից, հստակ է ձայնակարգային հիմնական հակվածությունը, ռիթմիկ բազմազանությունը, կառուցվածքը, որում կարևորագույն դեր ունեն կրկնակներն ու կրկնակ բառերն իբրև երգի կայացման հանգուցային կետեր, ակնհայտ առանձնացող թեմատիկ շրջանակն ու այդ ամենից բխող տրամադրությունն ու հոգեվիճակը:
- Դուրս բերելով հիմնական թեմատիկ շրջանակը, դրանով պայմանավորված՝ նաև երգի երաժշտության բնույթը, առանձնացրել ենք ողբի, պատմականի, անտունիի, կենցաղայինի ու այլ ժանրերի հետ աղերսներ ունեցող օրորներ և բուն գովք-օրորներ, ինչպես նաև բանահավաքի հորդոր-խնդրանքին ընդառաջ երգված նմուշներում հաճախ հանդիպող մանկական թռնոցու տարրերով պարերգ-օրորներ:
- Ընտրված ազգագրական գոտիներից գրառված նմուշների հետազոտությունն էլ թույլ տվեց առաջին անգամ ֆոլկլորագիտական առումով դուրս բերել երաժշտական բարբառային

առանձնահատկություններ մեկ ժանրի ներսում և եզրակացնել, որ հայկական ավանդական երգամտածողությունը հստակ արտահայտված գլոբալ ինքնատիպությամբ հանդերձ՝ իր ներսում աչքի է ընկնում երաժշտական բարբառների բազմազանությամբ, լոկալ-տարածաշրջանային ուրույն մտածողությամբ:

- Չնայած համաշխարհայնացման արագ տեմպերին և ավանդական մշակույթին դրա հասցրած վնասներին, ժանրի հանդեպ բավական մեծ հետաքրքրությունը ակնհայտ է, ինչը հաստատվեց մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքում ևս: Ստացվեց, որ ժանրը, ինչ-ինչ խոցելի կողմերով հանդերձ, միևնույն է՝ կենսունակ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Հակոբյան Ա.Ս.,** Երկնային լուսատուների թեմատիկան հայ օրորներում, Հայկական աստղագիտական ընկերության XIII տարեկան համաժողովի գիտական նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 115-120: **Հակոբյան Ա.Ս.,** Օրհնանքն ու անեծքը իբրև բանաձևային բանահյուսության տեսակ հայ օրորներում, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XI նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 234-239:
2. **Հակոբյան Ա.Ս.,** Վայոց Ձորի օրորների երաժշտական բարբառի հետազոտության փորձ՝ 33 և մեկ օրորերգի օրինակով, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XII նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»**,** 2018, էջ 116-123:
3. **Հակոբյան Ա.Ս.,** Շատախ աշխարհի հայրուրներ, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», 2019, N 3 (45), էջ 130-145:
4. **Հակոբյան Ա.Ս.,** Ավանդական օրորը Միհրան Թումաճանի գրառումներում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ԼՐԱՏՈՒ, 2020, N 1 (23), էջ 181-191:
5. **Հակոբյան Ա.Ս.,** «Ավետիս Ահարոնյանի «Նազեի օրորը» ժողովրդական երգարվեստում», ՎԷՄ հանդես, 2020, N 4:
6. **Հակոբյան Ա.Ս.,** Տարոն աշխարհի ռուրիներ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2021, N 3, էջ 199-215:

7. **Hakobyan A.**, The study history of lullaby genre and it's subtypes: since Komitas to nowadays, Արվեստագիտական հանդես, 2022, N 1 (7), pp. 246-255.
8. **Հակոբյան Ա.Ս.**, Հրատարակված և անտիպ օրորները Ք. Քուշնարյանի հավաքածուում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, 2022, N 3 (20), էջ 64-73:

АКОПЯН АНИ САРКИСОВНА
АРМЯНСКИЕ ТРАДИЦИОННЫЕ КОЛЫБЕЛЬНЫЕ
Резюме

Основной целью диссертации является исследование колыбельных песен, составляющих народную ветвь армянской традиционной музыки[21]. Хотя со второй половины XIX века образцы жанра — как фольклорный материал, были зафиксированы этнографами, а затем музыковедами записаны песенные примеры, тем не менее, по сей день, колыбельные — как музыкально-поэтическое комплексное явление, целостно и всесторонне не изучен.

Обобщая исследовательские достижения специалистов, занимающихся изучением колыбельных песен, представим характеристику жанра, его подвиды, музыкальные особенности: структуру, тембр, ритм, речевую и мелодическую связь. Наиболее существенной проблемой на пути реализации цели было то, что по сути, из-за отсутствия глубоких музыковедческих исследований, а также из-за стойкости жанра материал был слишком объёмным.

Основой для данной работы послужило изучение 124 фольклорных примеров колыбельных, отобранных из сборников, составленных в конце 19-го и начала 20-го вв. – «золотого века» армянской традиционной музыкальной культуры, и примеров, представляющих четыре этнографические области, целью которых было: в рамках одного жанра подчеркнуть самобытность и выявить характерные особенности пестнетворчества исследуемых регионов.

Основной текст диссертация состоит из 138 страниц — введения, трёх глав, 12 подглав, выводов, списка использованной литературы, а также нотного приложения, содержащего 124 нотных образца, которое планируется составить и издать в виде сводного сборника жанра колыбельной. Таким образом, в качестве собственно исследовательского материала, были выбраны в одном случае записи наиболее благоприятного периода музыкальной фольклористики — конец XIX и начало XX вв., а в другом – определённые этнографические регионы, на основании анализа которых работа имеет следующее строение.

Первая глава

- описание жанра
- поджанр
- изучение основной темы, характера и структуры, характерных для песен
- опыт исследования жизнеспособности жанра сегодня.

Вторая глава

- собственно анализируемый материал, согласно записям собирателей

---

[21]За исключением образцов, представляющих средневековое городское искусство Акна, так как некоторые музыковеды, в числе которых крупный ученый-теоретик армянской монодической музыки Х. Кушнарян, с этим регионом связывают традиции средневековых скитальческих песен «антуни», а также расцвет гусанского искусства, создавшего благодатную почву и наложившего своеобразный отпечаток на колыбельный жанр, бытующий в крестьянской среде.

фольклора конца 19-начала 20 веков;

Третья глава

• изучение по регионам.

Колыбельная песня, включающая в себя мелодию, речь и движение – обусловленное процессом убаюкивания ребёнка, в данном случае впервые профессионально рассматривается как музыкально-поэтическое комплексное явление, не оставляя без внимания и этнологческий и психологический аспекты. Диссертация основана на комплексном музыковедческом исследовании 124 образцов, которое позволило сделать следующие выводы:

1. Традиционная армянская колыбельная – жанр, несущий на себе яркую печать и самобытность национального музыкального мышления, истоки которого уходят в глубокую древность.

2. На основе глубоких научных исследований, некоторых наблюдений музыковедов, а также нашего музыкально-поэтического сравнительного анализа, мы выделили отдельные подтипы внутри жанра:

а/ устоявшиеся со временем традиционные колыбельные песни;

б/ импровизированные колыбельные, сопровождающие функцию убаюкивания. Среди указанных подтипов отличительным признаком является: в одном случае ясность музыкальных и поэтических форм, в другом - стихийность и неопределённость строения.

3. В этом контексте была заметна закономерность, что образцы первого - устоявшегося подтипа, по объективным причинам, дошли до нас по возможности в исконном состоянии, записи музыкального материала которых были сделаны в наиболее благоприятный период - конец XIX и начало XX веков.

4. В колыбельных, независимо от подтипа, определённым образом проявляется ладовая особенность, ритмическое разнообразие, структура, в которой важную роль играют повторяющиеся слова-рефрены и дублирующие фразы –- как исходное составляющее в формировании песни, чем и определяется тематика, настроение и душевное состояние.

5. Подчёркивая основные тематические особенности и обусловленный этим характер колыбельных, мы выделили сходство с другими жанрами (скорбные, исторические, скитальческие /антуни/, лирические песни), а также колыбельные с плясочными элементами, такими как «пестушки» и «потешки» (подбрасывание малыша), часто встречающиеся в исполняемых образцах.

6. Исследование записанных образцов, выбранных из определённых этнографических областей, позволило впервые с точки зрения фольклора выявить особенности музыкального диалекта в рамках одного жанра и сделать вывод, что традиционное армянское песенное мышление, наряду с ярко выраженным своеобразием, отличается разнообразностью музыкальных диалектов и локально-региональным мышлением.

7. Несмотря на стремительные темпы глобализации и ущерб, который она нанесла традиционной культуре, интерес к жанру очевиден, что подтверждается нашей исследовательской работой. Фактически, несмотря на уязвимость, жанр колыбельной жизнеспособен и в наши дни.

ANI SARGIS HAKOBYAN
ARMENIAN TRADITIONAL LULLABIES

Summary

The main purpose of the dissertation is to study the lullabies especially representing rural branch of Armenian traditional music[22]. Although since the second half of the 19th century, samples of the genre - as folklore material - were recorded by ethnographers, and then song examples were recorded by musicologists, nevertheless, to this day, lullabies, as a musical and poetic complex phenomenon, have not been holistically and comprehensively studied. Summarizing the research achievements of specialists involved in the study of lullabies, we present the characteristics of the genre, its subtypes, musical features: structure, timbre, rhythm, poetic and melodic connection. The most significant problem on the way to achieving the goal was that, in fact, due to the lack of deep musicological research, as well as due to the persistence of the genre, the material was too voluminous. The basis for this work was the study of 124 sumples of lullabies, selected from collections compiled in the late 19th and early 20th centuries. - the "golden age" of the Armenian traditional musical culture, and examples representing four ethnographic areas, the purpose of which was: within the framework of one genre, to emphasize the originality and identify the characteristic features of the songwriting of the studied regions. The main text of the dissertation consists of 138 pages - an introduction, three chapters, 12 subchapters, a conclusion, a bibliography, as well as a musical appendix containing 124 musical samples, which is planned to be compiled and published as a consolidated collection of the lullaby genre. Thus, in one case, recordings of the most favorable period of musical folklore - the end of the 19th and the beginning of the 20th centuries were chosen as the actual research material, and in the other - representing certain ethnographic regions, based on the analysis of which the work has the following structure.

First chapter

- genre description
- subgenre
- study of the main theme, character and structure characteristic of the songs
- the experience of researching the viability of the genre today.

[22] With the exception of samples representing the medieval urban art of Akn, since some musicologists, including a prominent theoretician of Armenian monodic music Kh. Kushnaryan, associate the traditions of medieval wandering songs “antuni” with this region, as well as the flourishing of Gusan art, which created fertile ground and left a peculiar imprint on the lullaby genre that exists in the peasant environment.

Second chapter

• actually analyzed material, according to the records of folklore collectors of the late 19th and early 20th centuries;

Third chapter

• study by region.

A lullaby that includes a melody, speech and movement is determined by the behavior of lulling a child in this case was for the first time professionally considered as a musical and poetic complex phenomenon, without disregarding the ethno-psychological aspect. The dissertation is based on a comprehensive musicological study of 124 samples, which led to the following conclusions:

1. The traditional Armenian lullaby is a genre that bears the bright stamp and originality of national musical thinking, the origins of which go back to ancient times.

2. Based on deep scientific research of the genre, some observations of musicologists, as well as our musical and poetic analysis, we have identified separate subtypes within the genre: traditional lullaby songs that have stabilized over time, and improvised lullabies that only accompany the rocking function. Among these two, an essential and striking series of distinguishing features is the clarity of musical and poetic structures in one case and their spontaneity in the other, the vagueness of form.

3. In this context, it was noticeable that, for objective reasons, samples of a stabilized subspecies of the genre have come down to us in the most intact form from the most favorable period for recording musical material - the end of the 19th century and the beginning of the 20th century.

4. In lullabies, regardless of the subtype, the main tonal direction, rhythmic diversity, structure are obvious, in which duplicate words play an important role as initial moments in the formation of the song, as well as themes, mood and state of mind.

5. Deriving the main thematic framework and the nature of lullabies, we have identified lullabies that are in contact with other genres such as prayer, historical song, antuni, etc.

6. The study of recorded samples from the selected ethnographic zones made it possible, for the first time, from the point of view of folklore, to identify the features of the musical dialect within the framework of one genre.

7. Despite the rapid pace of globalization and the damage it has caused to traditional culture, the interest in the genre is obvious, which is confirmed by our research work. In fact, the genre is still viable today, albeit with some changes.